

Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,
բողոքների 2018թ.-ի ամփոփագիր

2018թ-ի ընթացքում ստացվել է 1631 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 1272 քաղաքացի: Բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 75 քաղաքացի, որից 35-ի խնդրանքը բավարարվել է, 40-ինը՝ մերժվել /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 39 դիմումից դրական պատասխան է ստացել 37-ը, երկու քաղաքացու դիմում մերժվել է:

/Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 87 քաղաքացիներից 35-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 52 դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել են 17 քաղաքացի բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են 46 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 21 քաղաքացիներից, բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 32 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 31 դիմում է ստացվել:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած 11 քաղաքացիների առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ